ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնքի
ավագանու 7-րդ հերթական նիստի վերաբերյալ.

Համայնքը	Միջոցառման անվանումը	օրը	ժամը	Անցկացման վայրը
Գեղասար	Ավագնու հերթական նիստ	04.10.2021թ	11:00	Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Գեղասար 3փ, 2 նրբ., թիվ 2)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. հոկտեմբերի 04-ին՝ ժամը 11.00-ին Գեղասար համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 11.00

1.Գեղասար համայնքի ավագանու 2021թ. հոկտեմբերի 04-ի, 7-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

2. Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

3. Գեղասար համայնքի 2021թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Վ.Գրիգորյան

ՆԱԽԱԳԻԾ 20-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
04.10.2021ԹՎԱԿԱՆԻ 7-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին որոշում է .

Հաստատել Գեղասար համայնքի ավագանու 04.10.2021թվականի 7-րդ հերթական նիստի օրակարգը.

1. Գեղասար համայնքի ղեկավարի հաղորդումը 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

2.Գեղասար համայնքի 2021թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 21-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջով Գեղասար համայնքի ավագանին տալիս է իր հավանությունը.

Գեղասար համայնքի 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին, համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդմանը, համաձայն հավելվածի:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 22-Ն

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի Գեղասար համայնքի ավագանին որոշում.

1.Գեղասար համայնքի 2021թվականի տարեկան բյուջեում կատարել փոփոխություն բյուջեի 5134 հոդվածի 06.03.01. խումբ ենթախմբից 370.000 /երեք հարյուր յոթանասուն հազար/ դրամ գումարը և 5129 հոդվածի 01.01.01. խումբ ենթախմբին 224.500/երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր/ դրամ գումարը, ընդամենը՝ 594.500/հինգ հարյուր ինսունչորս հազար հինգ հարյուր/ դրամ գումար տեղափոխել 5112 հոդվածի 06.03.01. խումբ ենթախմբին համայնքում խմելու ջրի ներքին ցանցի և ջրամբարի վերանորոգում սուբվենցիոն ծրագրին, համայնքի կողմից մասնաբաժնի ներդրման համար: 4891 հոդվածի 11.01.02 խումբ ենթախմբից 350.000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ գումար տեղափոխել 4111 հոդվածի 01.01.01. խումբ ենթախմբին աշխատավարձի ֆոնդին: 4891 հոդվածի 11.01.02. խումբ ենթախմբի 176.000/ մեկ հարյուր յոթանասուն վեց հազար/ դրամ գումարը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից փոխանցված 722.400 /յոթ հարյուր քսաներկու հազար չորս հարյուր/ դրամ գումարը, ընդամենը՝ 898.400 /ութ հարյուր ինսունութ հազար չորս հարյուր/ դրամ գումարը տեղափոխել 4637 հոդվածի 09.02.02. խումբ ենթախմբին այլընտրանքային մանկապատեզի կառուցման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ